



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի սեպտեմբերմեկյան ողջույնի խոսքը՝ ուղղված ՀՊՏՀ քոլեջի ուսանողներին

Կրթության և գիտության նախարարի տեղակալ, հարգարժան պարոն Հովհաննիսյան

Հարգելի Նազելի Նավասարդյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի սիրելի՛ ուսանողներ, գործընկերներ

Անչափ ուրախ եմ, որ այսօր ձեր կյանքում սկիզբ է առնում ուսանողական հարուստ ու բազմաբովանդակ ժամանակաշրջանը: Հիմնական կամ ավագ դպրոցն ավարտելով, կրթության և հասունության մի կարևոր փուլ եզրափակելով՝ դուք մուտք եք գործել մասնագիտական կրթություն մատուցող հաստատություն, որի համար որոշում եք ընդունել, քննություն հանձնել, մրցակցություն հաղթահարել և ահա կանգնած եք մայր բուհի և քոլեջի ղեկավարության, ձեր դասախոսների առջև:

Վստահեցնում եմ՝ ձեր որոշման մեջ դուք չեք սխալվել, ձեզ հետ աշխատելու են փորձառու ու գիտակ մասնագետներ, ձեզ սպասում են գիտելիքի ամբարման հարուստ ու բովանդակալից օրեր, գեղեցիկ ավանդույթներ, նոր ծանոթություններ, բացահայտումներ, վերջապես հասունացման մի նոր շրջափուլ, որը կկոփի ձեզանում մեր հայրենիքի վաղվա օրվա արհեստավարժ մասնագետին ու արժանապատիվ քաղաքացուն:

Ցանկանում եմ, որ Գիտելիքի տոնի և նորամուտի այս բարձր տրամադրությունը ձեզ ուղեկցի առաջիկա տարիներին, որ աշխատասիրությամբ լծվեք ուսումնառությանը, այն համարեք այս պահին ձեր գլխավոր խնդիրը, պատվի ու պատասխանատվության հարց:

Հավատացե՛ք՝ լավ սովորելով, բարձր առաջադիմությամբ, օրինակելի վարքով ու կեցվածքով դուք ոչ միայն ձեզ եք կերտելու, այլ նաև

հպարտության զգացում էք նվիրելու ձեր ծնողներին, ուսուցիչներին, մեզ բոլորիս:

Հաջողություն եմ մաղթում ձեզ, բարձր տրամադրություն և բարի մեկնարկ: Ձեր առջև լայնորեն բաց են նաև մայր բուհի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դռները:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ